ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ----» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի և «Հանքաշար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2011 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված հ. 91/6-ԱԳ պայմանագրով «Հանքաշար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ստանձնած պարտավորությունը համարել դադարած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան համայնքի և «Հանքաշար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև գնորդ) միջև 29.09.2011թ. կնքված հ. 91/6-ԱԳ պայմանագրից ծագող ընկերության սեփականության իրավունքը Հյուսիսային պողոտա 6/2 հասցեում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիի նկատմամբ ստացել է պետական գրանցում 05.10.2011թ.:

Պայմանագրի 5.2-րդ կետի 5.2.3-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3 տարվա ընթացքում «Հանքաշար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև գնորդ) պարտավորվել է կատարել ներդրում առնվազն 3.700.000.000 (երեք միլիարդ յոթ հարյուր միլիոն) դրամի չափով, իսկ նույն կետի 5.2.4-րդ ենթակետով պարտավորվել է պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից կատարել օտարվող գույքի վերգետնյա հատվածի վերակառուցում, վերանորոգում, սանմաքրման աշխատանքների կազմակերպում և լուսավորության ապահովում, նոր կանաչապատ հատվածների ստեղծում և գոյություն ունեցողի ավելացում:

Հետևաբար, 3.700.000.000 ՀՀ դրամ ներդրումը գնորդի կողմից պետք է կատարվեր մինչև 2014 թվականի հոկտեմբերի 5-ը:

Պայմանագրի 5.2-րդ կետի 5.2.6-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրում նախատեսված յուրաքանչյուր պարտավորության ժամկետը լրանալուց հետո 15-օրյա ժամկետում գնորդը պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին ներկայացնել պարտավորության կատարման մասին հաշվետվություն՝ կցելով այն հաստատող փաստաթղթերը:

Պայմանագրի 7.2-րդ կետի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունը.

ա) սահմանված ժամկետում պայմանագրով նախատեսված ներդրումը չկատարելու կամ մինչև 50 տոկոս կատարելու դեպքում գնորդը 3 ամսվա ընթացքում <u>պարտավոր է</u> կատարել տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված, բայց չկատարած ներդրումները ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 5 (հինգ) տոկոսի չափով,

բ) սահմանված ժամկետում պայմանագրով նախատեսված ներդրումը 50 կամ ավելի տոկոսով կատարելու, բայց ամբողջությամբ չկատարելու դեպքում գնորդը 2 ամսվա ընթացքում <u>պարտավոր է</u> կատարել տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված և չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ <u>Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարած ներդրումների գումարի 3 (երեք) տոկոսի չափով</u>:

Գնորդի կողմից ներկայացվել են «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի կողմից կազմված հաշվետվություններ, որոնց համաձայն՝ գնորդի կողմից իրականացված շինարարական և ներդրումային աշխատանքների շուկայական արժեքը՝ <u>05.10.2014թ</u>. դրությամբ կազմել է՝ 3.030.906.360 ՀՀ դրամ, իսկ <u>31.12.2015թ</u>. դրությամբ կազմել է 4.026.828.729 ՀՀ դրամ:

Ներդրումները սահմանված ժամկետում և ծավալով մասնակի կատարելու համար պայմանագրի 7.2-րդ կետի բ) ենթակետի հիմքով առաջացել է 20072809 (քսան միլիոն յոթանասուներկու հազար ութ հարյուր ինը) ՀՀ դրամ տուգանք վճարելու պարտականություն:

Գնորդի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանն առնչվող հարցերը, վերջինիս ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկվել են Երևանի քաղաքապետի 29.05.2015թ. հ. 389-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի նիստում, որի ընթացքում պայմանագրի 5.2-րդ կետի 5.2.3-րդ և 5.2.4-րդ ենթակետերով նախատեսված պարտավորությունները համարվել են կատարված ամբողջությամբ՝ ի գիտություն ընդունելով «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի կողմից կազմված հաշվետվությունները:

Հանձնաժողովը արձանագրել է նաև, որ պայմանագրով սահմանված ժամկետում՝ մինչև 05.10.2014թ., ներդրումներն ամբողջ ծավալով կատարելուն խոչընդոտել են մի շարք օբյեկտիվ

հանգամանքներ, այդ թվում՝ Երևանի Հյուսիսային պողոտայում անցկացված բազմաթիվ հանրային միջոցառումները և հավաքները:

Հանձնաժողովի նիստում գնորդի ներկայացուցիչները խնդրեցին հաշվի առնել, որ սահմանված ժամկետում նախատեսված ներդրումն ամբողջ ծ ավալով չիրականացնելն առաջացել է իրենց կամքից անկախ պատճառներով և ազատել տույժի վճարման պարտականությունից:

Գտնում եմ, որ «Հանքաշար» ՍՊԸ-ին պետք է ազատել տուգանք վճարելու պարտականությունից, հաշվի առնելով հետևյալ իրավական և փաստական հանգամանքները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունը դադարում է պարտատիրոջ կողմից պարտապանին իր պարտականություններից ազատելով (պարտքը ներելով), եթե դա չի խախտում պարտատիրոջ գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքները:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գնորդի կողմից պայմանագրի 5.2-րդ կետի 5.2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունը՝ 3 մլրդ 700 մլն ներդրում, կատարվել է 4.026.828.729 ՀՀ դրամի չափով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածի դրույթները, որոնք թույլ են տալիս պարտատիրոջը պարտապանին ազատել պարտքի կատարումից (20072809 ՀՀ դրամ տուգանք), որի դեպքում պարտավորությունը համարվում է դադարած, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Պարտավորությունը դադարած համարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պարտավորությունը դադարած համարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ